

## ԴՐՈՒԱԳ Թ.

Ա. Հիւանդութիւն Լեւոնի եւ Մահ

Իսկ Լեւոնի ամփոփեալ այնուհետեւ զմիտս եւ զոգի՝ յարտաքին սահմանաց եւ իշխանութեանց, յանձն եւ յաշխարհ տերութեան իւրոյ միայն խորհէր. այնպէս յարդարել թողուլ յետ իւր, զի մի՛ լիցի ինքեան զեղջ՝ եւ յետամնացիցն թերութիւն. եւ յայն սակս ակն կալեալ մնայր անձկաւ խօսեցելոյ եւ յուսացելոյ փեսայի դստերն, զի հասցէ զամենայն յոյս կամ զվէճ ակնկալուաց թագին, այնքան ճգամբք ստացելոյ եւ այնքան արդեամբք փառաւորելոյ: Եւ մինչ նա դեռ յայսպիսի հոգս եւ՝ իխորհուրդս վարանէր հանապազօր, առաւելոյր գամ քան զգամ եւ մարմնոյն տկարութիւն. այլ ըստ յաճախ հանդիպման այսպիսեաց՝ եռանդուն ոգւոյ վիճակելոց՝ եւ՝ իջետին ծերութեան եւ հիւանդութեան, ոչ այնքան մօտալուտ կարծէր զօրհասին կասկած, զոր առաւել քան յինքեան՝ իդէմս մատուցելոցն առ ինքն նշմարէր. եւ թէպէտ առ փոքր փոքր տարածանէր շշուկ գուժի՝ յարքունիս եւ՝ իքաղաքին եւ յաշխարհին, եւ համօրէն յեկս որ ինմին եւ առ երեսփոխանս պետութեանց, այլ ո՞ էր որ իշխէր համարձակել մուծանել զմահուն պատգամ՝ իսենեակ Լեւոնի: Հարկ էր գտանել լեզու հրագինեալ՝ ըստ Եսայեայն առ Եզեկիաս. եւ հարկն եզիտ զպատշաճն. զհայրապետ աշխարհիին: Ոչ վրիպեցաւ յայսմ ծանր եւ կարեւոր պաշտաման՝ խորիմաց կաթողիկոսն Յովհաննէս, որ եւ ինքնին լցեալ էր աւուրբք. առեալ ընդ իւր զաւագագոյնս յիշխանաց եմուտ առ թագաւորն. լրջութեամբ դիմացն քան շարժմամբ շրթանցն՝ կանխեալ մերկանալ զոր ի սրտին վարանումն: Զգաց վաղվաղակի զգաստն մինչեւ ցմահ՝ զի այնուհետեւ բարձեալ է յամենեցուն յոյս կենաց իւրոց. եւ կամեցաւ՝ որպէս եկեացն՝ նոյնպէս իմն եւ մեռանել, տիրաբար եւ վսեմաբար. զիտաց՝ զի կայ դեռ օր եւ ժամ. եւ մինչ չեւ էր իսպառ նուաղեալ՝ իզօրութենէ՝ ցանկացաւ, ըստ զեղեցիկ տեսութեան մեղրաբան վարդապետի մերոյ Եղիշեայ, զմահ իմանալով՝ յանմահութիւն փոխել: Եւ որպէս իմիջօրէի կենացն՝ յաւուրս արութեանն, իլսել զոտնաձայն թշնամոյ՝ ինքնին կանխեալ ոստչէր ընդ առաջ ելանել հասանել՝ իվերայ ոսոխին, քան եթէ թոյլ տալ նմա զարքունի սահմանս իւր կոխել, այսպէս եւ՝ իկատարածին՝